

# ENPI FLEG

Եվրոպական հարելանության քաղաքականության արելեյան երկրներուն եւ Ռուսաստանուն անտառային օրենսդրության կիրարկման եւ անտառային ոլորտի կառավարման բարելավուն



Պատրաստվել է Եվրոպական միության հարելանության քաղաքականության աջակցությամբ



Լուսանկարը Յ. Բովիաննիսյանի

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ENPI FLEG ԾՐԱԳՐԻ ԼՐԱՏՈՒ  
ԹՈՂԱՐԿՈՒՄ 7 ՕԳՈՍՏՈՍ - ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2011



INTERNATIONAL YEAR  
OF FORESTS • 2011

ENPI FLEG ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՄԻԱՆՈՒՄ Է  
ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԿԱՆ



## Հետազոտական աշխատանքներ

### Փայտի պահանջարկը գերազանցում է մատակարարումը. բացահայտվել է հետազոտության արդյունքում

Փայտի պահանջարկը զգալիորեն գերազանցում է պաշտոնական մատակարարումը. բացահայտվել է «Հայաստանի անտառային ոլորտի ուսումնասիրություն. առկա պայմաններ և տարբերակներ» խորագրով հետազոտության արդյունքում (հաշվետվությունը տես [www.enpi-fleg.org](http://www.enpi-fleg.org) կայքում): Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի պատվերով միջազգային փորձագետներ Նիլս Յունգեն և Էմիլի Ֆրիպը տեխնիկական և սոցիալ-տնտեսական վերլուծությունների հիման վրա գնահատել են ոլորտի քաղաքական տնտեսության գործոնները:



Լոռու մարզ

2010 թ.-ին վառելիքայտի պաշտոնական մատակարարումը եղել է 75,000 խորանարդ մետր, այն դեպքում երբ միայն անտառամերձ համայնքների տնային տնտեսությունների կողմից վառելիքայտի օգտագործումը հաշվարկվել է 457,000 խորանարդ մետր: Իրատեսական հաշվարկներով նույն թվականին 120,000 խորանարդ մետր վառելիքայտ կարող էր օգտագործվել սննդի օբյեկտների կողմից: Ի հավելումն առկա է արդյունաբերական նպատակներով օգտագործվող փայտանյութի չհատակեցված պահանջարկ:

Մատակարարման և պահանջարկի միջև եղած այս զգալի տարբերությունը վկայում է այն մասին, որ շարունակվում է անտառամերձ ռեսուրսների ապօրինի կամ ոչ պաշտոնական օգտագործումը:

Սոցիալ-տնտեսական չափորոշիչները ցույց են տալիս, որ անտառային մատչելի հատվածներից փայտի սպառումն ավելի բարձր է, քան նույն տարածքներում անտառի բնական վերածի մակարդակը, ինչի արդյունքում երկրի անտառային պաշարները աստիճանաբար վերանում են: Ավելին, տեղի է ունենում լայնածավալ դեգրադացում և առաջանում են բնապահպանական հիմնախնդիրներ, որոնք ժամանակի ընթացքում խորանում են:



Տավուշի մարզ

Նշված խնդիրների լուծման համար հարկավոր է ավելացնել մատակարարումը և նվազեցնել պահանջարկը:

Հետազոտությամբ առաջարկվում է մատակարարումն ավելացնելու առնվազն երեք ուղի՝ (ա) անտառների առավել արդյունավետ կառավարում, (բ) անտառապատում և անտառավերականգնում, (գ) ներկրումների ավելացում: Պահանջարկը նվազեցնելու առաջարկներից են այլընտրանքային մատչելի վառելիքի և տնային տնտեսություններում էներգիայի արդյունավետ օգտագործման ձեռքի խթանումը:

Մինչև այս տարվա ավարտը հետազոտության արդյունքները կներկայացվեն շահագրգիռ կառույցներին:

### Նոր հրատարակություն. «Գյուղական բնակչության վրա ապօրինի հատումների ազդեցության համեմատական վերլուծություն»

2010-2011 թ.թ.-ին Բնության պահպանության միջազգային միության պատվերով, Ազրբեյգանսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը իրականացրեց Հայաստանի անտառամերձ համայնքների բնակչության վրա ապօրինի հատումների ազդեցությունը գնահատող ուսումնասիրությունը: Միաժամանակ նմանատիպ ուսումնասիրություններ անցկացվեցին ENPI FLEG ծրագրի մյուս հինգ երկրներում՝ Ադրբեջանում, Մոլդովայում, Ռուսաստանում, Վրաստանում և Ուկրաինայում:

Վերջերս Ուկրաինայում գործող «Կանաչ խաչ» ընկերակցությունը իրականացրեց նշված ուսումնասիրությունների համեմատական վերլուծությունը, որի հիման վրա էլ գիրք պատրաստվեց:

Գրքում ամփոփված են վեց երկրների համապատասխան իրավական դաշտը (օրենքներ, կարգեր, նորմեր) և անտառային պաշարների ոչ արդյունավետ ու անկայուն օգտագործման ու ապօրինի



հատումների պրակտիկան: Մանրամասն զուգահեռներ են անցկացվում ապօրինի անտառօգտագործման պատճառների եւ գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական պայմանների վրա դրանց ազդեցության միջեւ:

Ներկայացվող առաջարկների թվում են Եվրոպական միության երկրներում ապօրինի հատումների կանխարգելման նպատակով անտառկառավարման համակարգի բարելավման փորձի կիրառումը, անտառային քաղաքականության մեջ բարեփոխումները եւ անտառների սերտիֆիկացումը:



Աշխատանքային հանդիպում Լվովում

Հրատարակության հայեցակարգը եւ կառուցվածքը քննարկվել են մի շարք աշխատանքային հանդիպումների եւ խորհրդակցությունների ընթացքում, որոնք տեղի են ունեցել ինչպես առանձին երկրների, այնպես էլ բոլոր վեց երկրների փորձագետների մասնակցությամբ: Հայաստանի անտառային ոլորտի խնդիրները վերլուծել են փորձագետներ Ն. Վարդանյանը եւ Տ. Ջոհրաբյանը:

## Անտառային օրենսդրության ոլորտում կարողությունների զարգացում

### Նոր ռեսուրս անտառային օրենսդրության մասին



Լուսանկարը՝ Հ. Հովհաննիսյանի

Հրատարակության է հանձնվել WWF Հայաստանի պատվերով Շրջակա միջավայրի իրավական պահպանության հասարակական կենտրոնի պատրաստած ՀՀ անտառային օրենսդրության ուղեցույցը: Այն հայալեզու առաջին ռեսուրսն է, որտեղ համակողմանիորեն բացատրվում եւ մեկնաբանվում են ՀՀ անտառային օրենսգրքի հոդվածներն ու դրույթները, որոշ դեպքերում նաեւ գործնական օրինակներով: Հղումներ են կատարվել համապատասխան ենթաօրենսդրական ակտերին և այլ իրավական փաստաթղթերին: Ներկայացված է Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենքի, ՀՀ

քաղաքացիական, քրեական եւ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերի անտառային օրենսդրության համակարգը ձեւավորող դրույթների մեկնաբանությունը: Ուղեցույցի հեղինակները ներկայացրել են նաև օրենսդրության կատարելագործման վերաբերյալ մի շարք առաջարկներ:

Ուղեցույցը օգտակար կլինի օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության համակարգերում, շրջակա միջավայրի պահպանությամբ զբաղվող կազմակերպություններում եւ անտառային տնտեսություն վարող սուբյեկտներում աշխատողների, գործարարների, ինչպես նաեւ համապատասխան ԲՈՒՀ-երի դասախոսների ու ուսանողների համար:

# ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Կանոնակարգվի կլոր անտառանյութի հսկողությունը



Լուսանկարը՝ Գ. Նանյանի

Անտառային պետական մոնիթորինգի կենտրոնին Համաշխարհային բանկի տրամադրած «Անտառային մոնիթորինգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում միջազգային երկու փորձագետներ Անատոլի Կուրիցինը և Ալեքսեյ Կուրիցինը մշակել են կլոր անտառանյութի հայեցակարգը:

Հայեցակարգը կոչված է կանոնակարգելու կլոր անտառանյութի վերահսկողությունը հաշվառման և համարակալման միջոցով: Փաստաթուղթը բաղկացած է մի քանի մասերից, որոնք ներառում են նկարագրական, ուսուցողական և կիրարկումը

ապահովելու մասին նյութեր: Փաստաթուղթը ուղեցույց կլինի «Հայանտառ»-ի եւ Անտառային պետական մոնիթորինգի կենտրոնի համար:

Սեպտեմբերի 11-ից 17-ը հայեցակարգի հեղինակները այցելեցին Հայաստան եւ «Հայանտառ»-ի և Անտառային պետական մոնիթորինգի կենտրոնի աշխատակիցներին ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքը, որը հավանության արժանացավ:

Ըստ հայեցակարգի կլոր անտառանյութը կհամարակալվի անտառտնտեսությունում եւ հատուկ նշավորող մուրճի միջոցով կնշվի փայտի կարգը (I, II, III կամ շինափայտ): Այնուհետև, հատուկ համակարգչային ծրագրի միջոցով համարակալված անտառանյութի մասին տվյալները կմուտքագրվեն համակարգչում և կուղարկվեն կենտրոնական սերվերին, որտեղ տեղակայված կլինի տվյալների բազան՝ այսպիսով կանխելով փայտանյութի ապօրինի շարժը:

Հայեցակարգի հեղինակների հավաստմամբ, առաջարկվող մեթոդոլոգիայի ներմուծումը կարող է դառնալ ապօրինի հատումների դեմ պայքարի առաջին քայլը:

## Կարևորվեց անտառային հրդեհների կառավարումը

Անտառային հրդեհների 96 տոկոսի պատճառը մարդկանց անտարբերությունը եւ գյուղատնտեսական թափուկի ու արոտավայրերի այրումն է, ինչն արագորեն տարածվում է մոտակա անտառներում: Այս խնդիրները կանխարգելելու համար անհրաժեշտ են հրդեհների կառավարման հստակ մեխանիզմներ:



Լուսանկարը՝ ՄԱԶԾ ԳԵՖ ծրագրի

Նշված հարցերը գտնվում էին շահագրգիռ պետական կառույցների, տեղական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված մի շարք միջոցառումների ու շաղրության կենտրոնում: Կազմակերպիչներն էին ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը:

Այսպես, սեպտեմբերի 12-ին եւ 13-ին Կապանում տեղի ունեցավ դասընթաց եւ վարժանք Սյունիքի մարզի անտառտնտեսությունների ու պահպանվող տարածքների եւ փրկարար ծառայության աշխատակիցների համար: Նրանք ծանոթացան անտառային հրդեհների կառավարման միջազգային լավագույն փորձին եւ ժամանակակից մեթոդներին, ինչպես նաեւ արագ արձագանքման սարքավորումների ճիշտ օգտագործմանը:

Դաշտային միջոցառումներին հաջորդեց ոլորտի բոլոր դերակատարների մասնակցությամբ կոնֆերանսը սեպտեմբերի 14-ին: Մասնակիցները քննարկեցին անտառային եւ բնական հրդեհներին առնչվող խնդիրները եւ ձեռքբերումները: Կարելի էր արտակարգ իրավիճակներում արձագանքման կարողությունների զարգացումը, համապատասխան օրենսդրության պատշաճ կիրարկումը եւ խնդրի լուծման ուղղությամբ տարածաշրջանային ու միջազգային համագործակցությունը:



Լուսանկարը՝ ՄԱԶԾ ԳԵՖ ծրագրի

Կոնֆերանսին հաջորդեց կլոր սեղան, որը վարում էին անտառային հրդեհների միջազգային փորձագետներ: Կլոր սեղանի արդյունքում որոշվեց ստեղծել անտառային ու բնական հրդեհների կառավարման մշտական ազգային աշխատանքային խումբ՝ շարունակելու մինչ այժմ սկիզբ առած զարգացումները:

## Կայուն անտառակառավարման հիմնախնդիրները սեմինարի մասնակիցների ուշադրության կենտրոնում

Հայաստանի անտառների ներկա վիճակը եւ բարելավման ուղիները քննարկվեցին Անտառային պետական մոնիտորինգի կենտրոնի՝ Համաշխարհային բանկի տրամադրած «Անտառային մոնիթորինգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինարի ընթացքում, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 23-ին եւ 24-ին Աղավնաձորում: Մասնակցում էին Գյուղատնտեսության նախարարության, WWF Հայաստանի, «Զիկատար» բնապահպանական կենտրոնի, ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի, «Հայանտառ»-ի եւ վերջինիս Գուգարքի անտառտնտեսության ներկայացուցիչներ:



Լուսանկարը՝ Հ. Հովհաննիսյանի

Նրանք քննարկեցին անտառային էկոհամակարգին վնաս պատճառող գործողությունները, որոնց թվում փոքր ՀԷԿ-երի կառուցումը, հանքարդյունաբերությունը, խոշոր եղջրավորներին արածացնելը: Այնուամենայնիվ, ապօրինի հատումները անտառային պաշարների կրճատման հիմնական պատճառներից են: Այս համատեքստում սեմինարի մասնակիցները հատկապես նշեցին «անտառային բիզնես» եւ «կազմակերպված հանցագործություն» արտահայտությունները:

Որպես ապօրինի հատումների դեմ պայքարի միջոց, մասնակիցները քննարկեցին Անտառային պետական մոնիտորինգի կենտրոնի՝ վերը նշված ծրագրի շրջանակներում առաջարկած գերանների համարակալման համակարգի նախագիծը, ըստ որի յուրաքանչյուր կտրված գերան, նախքան մի վայրից մյուսը տեղափոխվելը, կհամարակալվի, իսկ տվյալները կպահպանվեն «Հայանտառ»-ի բազայում: Այն գերանները, որոնք համապատասխան համարակալում չեն ունենա եւ դրանց մասին տվյալները կբացակայեն բազայում, կհամարվեն ապօրինի հատված: Ներկաները համակարծիք էին, որ գերանների շարժի վերահսկումը կարող է զգալիորեն նվազեցնել ապօրինի հատումների ծավալը:

Առկա իրավիճակը բարելավելու համար մասնակիցները կարելի էրեցին անտառային տնտեսություններում նոր տեխնոլոգիաների ներդրումը, քաղաքական կամքի դրսևորումը եւ մարդկային ռեսուրսների, մասնավորապես երիտասարդ կադրերի ներգրավումը:

# ENPI FLEG ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Եվրոպական հարեւանության քաղաքականության արեւելյան երկրներում եւ Ռուսաստանում անտառային օրենսդրության կիրարկման եւ կառավարման բարելավում ծրագիրը աջակցում է մասնակից երկրների կառավարություններին, քաղաքացիական հասարակությանը եւ մասնավոր ընկերություններին՝ մշակելու անտառների կառավարման հստակ եւ կայուն մեխանիզմներ, ներառյալ ապօրինի հատումների կանխումը: Մասնակից երկրներն են Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Մոլդովան, Ռուսաստանը եւ Ուկրաինան: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: [www.enpi-fleg.org](http://www.enpi-fleg.org)

## ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ



### Եվրոպական հանձնաժողով

Եվրոպական միությունը զարգացման նպատակով պաշտոնական աջակցություն տրամադրող ամենամեծ դոնորն է աշխարհում: EuropeAid Ջարգացում և համագործակցությունը՝ Եվրոպական հանձնաժողովի գլխավոր տնօրինությունը, պատասխանատու է Եվրոպայի զարգացման քաղաքականությունը մշակելու և աշխարհի բոլոր երկրներին ֆինանսական մի շարք մեխանիզմների միջոցով աջակցություն տրամադրելու համար՝ ապահովելու այդ աջակցության որակն ու արդյունավետությունը: Ջարգացման դաշտում լինելով ակտիվ և պրոակտիվ դերակատար՝ մենք խթանում ենք լավ կառավարումը, մարդկային ու տնտեսական զարգացումը և ուշադրության կենտրոնում պահում այնպիսի համընդհանուր խնդիրներ, ինչպիսիք են սովի դեմ պայքարը և բնական ռեսուրսների պահպանությունը:



### Համաշխարհային բանկ

Համաշխարհային բանկը զարգացող երկրներին տրամադրվող ֆինանսական եւ տեխնիկական աջակցության կենսական աղբյուրներից է: Մեր առաքելությունն է ավելցուկ ու մասնագիտորեն պայքարել աղքատության դեմ՝ կայուն արդյունքների հասնելու համար եւ մարդկանց օգնել, որպեսզի նրանք օգնեն իրենք իրենց եւ շրջակա միջավայրին՝ տրամադրելով ռեսուրսներ ու գիտելիք, զարգացնելով կարողություններ եւ պետական ու մասնավոր սեկտորների հետ հաստատել համագործակցություն: [www.worldbank.org](http://www.worldbank.org)



### Բնության պահպանության միջազգային միություն

Բնության պահպանության միջազգային միությունը (IUCN) նպաստում է աշխարհում առկա բնապահպանական եւ զարգացման հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը: Գործունեության ոլորտներն են կենսաբազմազանությունը, կլիմայի փոփոխությունը, էներգիան, բնակչության կենսապայմանները եւ «կանաչ տնտեսությունը»՝ հետազոտական աշխատանքների ու աշխարհի տարբեր երկրներում իրականացվող ծրագրերի եւ կառավարության, ՀԿ-ների, ՄԱԿ-ի եւ ձեռնարկությունների միավորման միջոցով քաղաքականություն ու օրենսդրություն մշակելու եւ լավագույն փորձ ձեռք բերելու համար: Բնության պահպանության միջազգային միությունը աշխարհում ամենավաղ հիմնադրված խոշոր բնապահպանական կազմակերպություններից է եւ 160 երկրներում ունի կառավարությունը եւ ՀԿ սեկտորը ներկայացնող ավելի քան 1000 անդամ, ինչպես նաեւ շուրջ 11 000 կամավոր փորձագետ: Միության գործունեությունն իրականացնում են աշխարհի 60 գրասենյակների 1000 աշխատակիցները՝ պետական կառույցները, ՀԿ-ները եւ մասնավոր սեկտորը ներկայացնող հարյուրավոր գործընկերների հետ համագործակցելով: [www.iucn.org](http://www.iucn.org)



### Բնության համաշխարհային հիմնադրամ

Բնության համաշխարհային հիմնադրամը (WWF) աշխարհի խոշոր եւ ճանաչված անկախ բնապահպանական կազմակերպություններից է, որն ունի ավելի քան 5 միլիոն աջակից եւ 100 երկրներում գործող գլոբալ ցանց: Հիմնադրամի առաքելությունն է դադարեցնել երկրի բնական միջավայրի վատթարացումը եւ կառուցել մի ապագա, որտեղ մարդիկ ու բնությունը ներդաշնակ են՝ պահպանելով մոլորակի կենսաբազմազանությունը, ապահովելով վերականգնվող բնական պաշարների կայուն օգտագործումը եւ նվազեցնելով աղտոտումն ու բնական պաշարների անխնայ սպառումը: [www.panda.org](http://www.panda.org)



**FLEG**

Forest Law Enforcement & Governance



Այս լրատուն պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Լրատուի բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն Բնության պահպանության միջազգային միությունը: Լրատուն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ որ արտահայտեն ծրագրի գործընկերների տեսակետները: